

Նախնական զինվորական պատրաստություն և անվտանգ կենսագործունեություն
առարկայի օլիմպիադա 2017թ.

Մարզային փուլ
10-12 - րդ դասարան

Տևողությունը՝ 150 րոպե:

Գնահատումը՝ 20 միավորանոց համակարգով:

Յուրաքանչյուր առաջադրանքին տրված ճիշտ պատասխանը գնահատվում է 1(մեկ) միավոր:

1. Ե՞րբ և որտե՞ղ է սկզբնավորվել ֆիդայական շարժումը.

- ա) Արևմտյան Հայաստանում XIX դ. բ) Միրիայում XIX դ.
գ) Արևելյան Հայաստանում XVII դ. դ) Հյուսիսային Հայաստանում XVII դ.

2. Հայկական քանի՞ դիվիզիա է մասնակցել Հայրենական Մեծ պատերազմին (1941-1945թթ).

- ա) 5 բ) 6
գ) 7 դ) 3

3. Քանի՞ մետր է կազմում հակահետևակային բեկորային ականի / ՀԲԱ-2Մ/ համատարած խոցելիության շառավիղը

- ա) 5 մ բ) 3 մ
գ) 6 մ դ) 4 մ

4.Գիշերային ժամերին թշնամուն սարսափի մեջ պահող Գ.Նժդեհի դիվերսիոն խմբերը կոչվում էին՝

- ա) Հայ-Արիներ բ) Գայլախմբեր
գ) Բազեններ դ) Արծիվներ

5. Միջուկային զենքից առաջացած լուսային ճառագայթումը արդյունք է՝

- ա) շիկացած գազերի ու շիկացած բ) շիկացած նյութերի ու
օդի: շիկացած գազերի:
գ) շիկացած նյութերի և շիկացած դ) շիկացած օդի:
օդի:

6. Սովորաբար քանի՞ մետր ճակատ է ունենում հակատանկային ականադաշտը.

- ա) 300-500 մ բ) 500-700 մ
գ) 100-200 մ դ) 150-350 մ

7. Վարակի ո՞ր խմբին է պատկանում տգային էնցեֆալիտը.

- ա) Աղիքային բ) Մաշկային
գ) Արյունային դ) Շնչառական

8. Մաշկի կամ լորձաթաղանթի ամբողջականությունը խախտող վնասվածքները կոչվում են՝

- ա) սալջարդեր բ) պատռվածքներ
գ) վերքեր դ) ճեղքվածքներ

9. Ինչպե՞ս է կոչվում թաքստոցի հետևում գտնվող գնդակից չխոցվող տարածությունը (թաքստոցի գազաթից մինչև հանդիպման կետը).

- ա) Պատասպարված տարածություն բ) Մեռյալ տարածություն
գ) Պաշտպանված տարածություն դ) Անխոցելի տարածություն

10. Արգելվում է չպաշտպանված քաղաքների, շենքերի ու շինությունների և այլ բնակելի վայրերի.

- ա) գրավումը բ) կրակի տակ պահելը
գ) ոմբակոծությունը դ) գնդակոծությունը

11. 12 մետր իրական բարձրություն ունեցող ծառի բարձրությունը X կետից քանոնով չափելիս ստացան 8 մմ: Գտնել X կետից մինչև տվյալ ծառը եղած հեռավորությունը:

12. Ո՞րն է կոչվում ուղիղ կրակոց:

13. Ո՞րն է կոչվում մեռյալ տարածություն:

14. Թվել գինվորական պատասխանատվության տեսակները:

15. Ի՞նչ է քիմիական զենքը:

16. Ո՞րն է կոչվում արգելափակիչ կրակ:

17. Գնդակները ըստ խոցման հատկության լինում են՝

18. Ինչի՞ համար են նախատեսված ճառագայթային հետախուզության չափիչ սարքերը:

19. Ով՞ է փրկարարը:

20. Ինչո՞վ է տարբերվում դիրեկցիոն անկյունը մագնիսական ազիմուտից: